

Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր Ո Ւ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓԱԹԵԹԻ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ
ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ N 00031904-ԱՊ
ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

07/12/2020թ.

ՀՀ առողջապահության նախարարությունը (այսուհետ՝ Ապահովադիր)՝ ի դեմս **գլխավոր քարտուղար Լուսինե Քոչարյանի** մի կողմից, և **«ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ապահովագրական սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը** (այսուհետ՝ ապահովագրող)՝ ի դեմս **գործադիր տնօրենի Ժ/պ Մանե Մարտիրոսյանի** մյուս կողմից, հետագայում երկու կողմերը միասին կանվանվեն «Կողմեր», կնքեցին 16/01/2020թ.-ին կնքված սոցիալական փաթեթի շահառուների առողջության ապահովագրության N 00031904-ԱՊ պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) առողջապահության նախարարի 2020 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 4292-Ա հրամանի համաձայն փոփոխություններ կատարելու վերաբերյալ սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

1. Կողմերը համաձայնվում են Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները.
 - 1.1. Պայմանագրի N 3 Հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 1 հավելվածի:
 - 1.2. Սույն համաձայնագրի 1.1 կետով նախատեսված փոփոխություններով պայմանավորված՝
 - 1.2.1. Պայմանագրի 5.2 կետում «**206,550,000,000 ՀՀ դրամ**» բառերը փոխարինել «**203,280,000,000 ՀՀ դրամ**» բառերով,
 - 1.2.2. Պայմանագրի 6.2 կետում «**647,508,112 ՀՀ դրամ**» բառերը փոխարինել «**646,056,781 ՀՀ դրամ**» բառերով:
2. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում 30/11/2020թ. ժամը 00:01-ից և գործում է Պայմանագրի գործողության ողջ ժամկետի ընթացքում:
3. Կողմերը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով, համաձայնում են, որ սույն համաձայնագիրը տարածվում է միմյանց միջև 2020թ.-ի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:
4. Սույն համաձայնագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է համաձայնագրի մեկ օրինակ:

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂ

ԱՊԱՀՈՎԱԴԻՐ

«Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ

**Հայաստանի Հանրապետության
առողջապահության նախարարություն**

Հասցե՝ ք. Երևան, Ավետ Ավետիսյան 116/1, 116/5
Հեռ.՝ + 374 060 50 00 60
Էլ. փոստ՝ nairi@nairi-insurance.am
Բանկ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ

Հասցե՝ Երևան, Կառավարական տուն 3
Հեռ: +374 10 54-40-27
Էլ. փոստ՝ info@moh.am
Բանկ՝ ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
Բանկային հաշիվ՝ 900011105013
ՀՎՀՀ՝ 02507171

**Գործադիր տնօրենի Ժ/պ՝
Մանե Մարտիրոսյան**

**ՀՀ առողջապահության նախարարության
գլխավոր քարտուղար՝ Լուսինե Քոչարյան**

Հավելված N 1
 Սոցիալական փաթեթի շահառուների
 առողջության ապահովագրության պայմանագրում
 փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ
 07/12/2020թ. կնքված համաձայնագրի

«Հավելված N 3
 Սոցիալական փաթեթի շահառուների
 առողջության ապահովագրության պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

(ՀՀ դրամ)

Ծրագրային դասիչ	Ծրագրի անվանումը	Վճարման ենթակա ապահովագրավճարի մասնաբաժինները և դրանց համապատասխան վերջնաժամկետները											
		մինչև 2020թ. փետրվարի 29-ը	մինչև 2020թ. մարտի 31-ը	մինչև 2020թ. ապրիլի 30-ը	մինչև 2020թ. մայիսի 31-ը	մինչև 2020թ. հունիս 30-ը	մինչև 2020թ. հուլիս 31-ը	մինչև 2020թ. օգոստոսի 31-ը	մինչև 2020թ. սեպտեմբերի 30-ը	մինչև 2020թ. հոկտեմբերի 31-ը	մինչև 2020թ. նոյեմբերի 30-ը	մինչև 2020թ. դեկտեմբերի 25-ը	Ընդամենը տարի
1207- 11004	Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ	71,764,100	107,646,100	161,458,400	215,270,700	269,083,100	322,895,400	377,734,600	431,693,600	503,631,800	575,569,900	646,056,781	646,056,781

Ապահովագրող

(ստորագրությունը)

Ապահովադիր

(ստորագրությունը)